


# Չ Ա Յ Ե

# Հայրենեաց

ՇԱԲԱԹ-ԱԹԵՐԹ

## Ա Ձ Գ Ա Յ Ի Ն, Գ Ր Ա Կ Ա Ն ԵՒ Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն



**ՄԶԱԻՆ**  
**ՄԱՐԵՆՈՒԿ**  
AN ARMENIAN WEEKLY.  
16 MECHANIC STREET,  
WORCESTER, MASS.

ՀԱՍՏԷ  
AMERICAN HAI PUBLISHING Co  
P. O. Box 379, Worcester, Mass.

Entered at the Post Office at  
Worcester, as Second-Class  
Mail Matter.

Subscription \$1.50 a Year.

ԲԱՃԱՆԳԻՆ  
Մ.Ն.Ա.ՀԱՆ.Գ.ՈՅ ՀԱՄԱՐ  
Տարեկան \$1.50  
Վեցամսեայ 0.85  
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ  
Տարեկան 10 Ֆրանկ  
ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐԵԼԻ

Խմբագրութեան ղրկուած նամակ կամ ծրար ետ չեն վերադարձուիր:

ԳԻՆ 3 ՍԷՆԹ:

### ԿՐՈՆԸ ԵՒ ԻՐ ԴԵՐԸ

Վերին ինքնիշխան զորք մեր նախնիներ առաջնորդողով ջանացել էինք ցուցնել թէ ինչ ՉԷ՛ կրօնը. այժմ ըստ կարի պիտի աշխատենք բացատրել թէ ինչ է՛ կրօնը:

Յարաբերութեան այն ներդաշնակութիւնը որ կայ զրին, ջուրին, հողին ու արեւին միջեւ, որոցմով ու որոց մէջ կապրին, կաճին և կ'արդիւնաբերուին սերմն ու սաղմը՝ կը կոչենք բնութիւն. այն յարաբերութիւնն ալ որ կայ բնական և բարոյական աշխարհին մէջ, կանոնանք կրօն. ուր մարդկութիւնը կը զարգանայ կազմուածայ և կը բարձրանայ բարոյապէս:

Աստուածարաններուն կրօնին տուած սահմանն է, «Յարաբերութիւն ի մէջ Աստուծոյ և մարդկան»: Սակայն այնքան յարաբերական անուն մը զարձար է «Աստուած», որ ինչ որ անով կը սահմանուի, յարաբերական չ'անակութիւն կուտանայ, Մովսէս, Ջորդալա, Պետայ, Մուհամէտ և Յիսուս Աստուծոյ վրայ իրարմէ այնքան սարբեր զաղափարներ ունեցել են, որքան իրարու հակասական եղած են անոնց արտայայտած ճշմարտութիւնները: Ոչ միայն այդ. նոյնիսկ նոյն կրօնապետին (օրինակի համար Յիսուսի) հետեւողներն Աստուծոյ և աստուածարաններն մասին այնքան տարակարծիք գտնուած, մէկ մէկէ այնքան բաժնուած ու ստորաբաժնուած են որ յարանուանութեանց թիւը հարիւրաւորներու կը հասնի որոց իւրաքանչիւրը մինչև վերջնա, իրմէն զատ մնացելով ամենու ազմ երկնքին դուռը կը գոցելու ու հաւատարմութեան մասին մարտիրոսութեան ուրուականները մեր առջեւ կը կանգնին և կը խոսնին:

Մեծ բարեկարգիչը, Տօք Փարբըրսթ անցնալ օր իր քարոզին մէջ դառնացած արտով մը ըսաւ, «Աստուածարանութիւնը Գրիստոնէութեան մէջ ահաբի չարիքներու պատճառ զարձար է»: Աստուածարանութիւնը Միսթիքութեան երթնալով՝ շատ անգամ ցնորքի ու մոլեգնութեան վերածուելու կրօնը ամօթալի և քստմեծիլ արհաւիրքներու դուռ դարձուցեր է:

Գրիստոնէութեան խաւարակուողարարուն երկու մեծ լուսաւորները. Լուստեր և Ջուրնիկ՝ գոյափոխութեան և ոչ գոյափոխութեան խնդիր մը յարուցանելով իրարմէ բաժնուեցան, զիրար դատապարտանցին, մէկմէկ լքանեցին ու առիթ տուին որ հասարակաց թշնամին ամբողջ 36 տարի բողոքականութեան սրտէն արիւնի գետեր հոսեցուց անընդհատ:

Փիւրիթները ժամանակին Անգլիոյ հալածանքներէն փախչելով նոր աշխարհը ապաստանեցան ու կրօնական ազա-

տութեան համար ինչ նեղութիւններ քաշեցին, սակայն երբ հոս իրենց մէջէն ելաւ նոր յարանուանութիւն մը, մկրտականները, իրենք ալ սկսեցին զանոնք հալածել, անոնց քթերն ու ականջները կտրել:

Գրիստոնէութիւնը իր ազնուագոյն ու ժերը զոհած է և կատաղի կռիւններ մղած աստուածարանական խնդիրներու տարբերութեանց համար. ոչ թէ մարդկութեան ուղղակի օգտակարութիւնը մտածելով. Յիսուսի դերեզմանը հեթանոսաց ձեռքէն ազատելու նպատակաւ քանի անգամ խաչակրութիւններ ելած ու որքան քրիստոնէից արիւններ թափուած են. սակայն գերի ազգի մը ազատութեանը համար տակաւին այդպիսի շարժում մը ծագած չէ քրիստոնէութեանէն:

Այս իրականութիւն երբ անսելով շատ մարդիկ գայթակղել և կրօնը համարել են մարդկութեան ուժերը սնուող սեղը սպառելու և սրտն անհրաժեշտակ պահելու գործիք մը:

Շատ անգամ մենք ստիկ երևոյթները իրականութիւն համարել ենք:

Նոյն արեւն տակ չէ՞ որ կուռնանք ինչպէս ձիւնապատ ու ցրտառնչ ձմեռը. նոյնպէս ալ անուշ ու ծաղկազարդ գարունը: Միթէ գարնանային արեւը կը տարբերի՞ ձմեռնային արեւէն. կամ թէ մէկ պարագային արեւը մեզի մօտ կուգայ և միւս պարագային կը հեռանայ: Ոչ մին և ոչ միւրը: Արեւ ձմեռուան եղանակին, ընդ հակառակն, աւելի մօտէ երկրագնդին քան ամառուան տօթակէզ օրերը: Ուրեմն ուսկի՞ց յառաջ կուգան նոյն արեւին տակ եղանակներու այս անհամեմատ տարբերութիւնները, ձմեռն ու ամառը:

Տարուան չորս եղանակներու փոփոխութիւնները յառաջ կուգան երկրագնդին արեւական դէմ բռնած տարբեր դիրքերէն. երբ շիտակ կեցած է՝ արեւն ճառագայթները ուղղակի կուգան, շեշտակի կը զարնեն ու տաք կընեն, իսկ երբ կըսկսի թեքուիլ, ինչ համեմատութեամբ որ ծոխ նոյն համեմատութեամբ արեւին ճառագայթները խոտորակի կը զարնեն երկրին ու ըստ այդ համեմատութեան ցուրտ կընեն:

Նոյնպէս ալ կրօնը մարդկութեան իր դէմ բռնած տարբեր դիրքերուն համեմատ տարբեր ազդեցութիւններ գործած է: Երբ մարդիկ հակառակ մտքով ու ծուռ սրտով կանգնել են կրօնին հանդէպ. անոր ազդեցութիւնը խոտորակի ընդունելու է իրենց գլխին բերեր են ձիւնն ու ծմեռը. յառաջ եկեր է կրօնական սնապաշտութիւն, ցնորք. բռնութիւն և աղէտ:

Ու ընդ հակառակն մարդիկ որքան ողջամտ արամադրութեամբ. ուղիղ մտք և շիտակ սրտով կենան կը ծնա-

կան ճշմարտութեանց առջեւ, այն համեմատութեամբ ալ անկէ կընդունին ազատութեան, յառադրութեան, ազնուացման և ընդհանուր բարեկեցութեան սուրբ ու շինիչ ներգործութիւնները եւ կը վայելին կենսաւէտ ու քաղցրաշունչ գարուն մը:

Ուրեմն այս կենսական խնդիրը փոխանակ ցաւի երեւոյթներէն դատելու, քննելու անոր բուն էութիւնը և կոչումը: (Շարունակելի)

Գ. Պ. ՉԻԹՃԵԱՆ,

### ՅՈՐԵԼԵԱՆԻ ՄԸ ԱՌԹԻԻ

Մեր դրկից թերթին կիս ամեայ յորեւանին ակամատես եղած էինք Յամիս առաջ, հիմա ալ անոր միամտայ յորեւանին հանդիսատես ենք:

Պիտի խնդակցէինք մեր պաշտօնակիցներուն եթէ զէթ իրենց այս յորեւանը կատարէին առանց կեղծիքներու: Այդ յորեւանը թուոյն մէջ մեզի ազդուած կարգ մը անհիմն ու նենգ անարկութիւնները հերքել նուաստացուցիչ կը համարենք. միայն երկուքին պատասխանենք:

Ա. ես, ոչ ե ի ոչ ալ Ա. է մինչև Փորէն մարդու խանութիւն մէջ Պ. Արփի արի յեղափոխական նկարագրին վրայ խօսելով զայն «Անկարագիր» անուանած եմ: Իզուր թող չճգնին Պ. Արփիարի վրայ յերուրուած «Տօկումաններուն» նոր յաւելում մը կցել, իմ բերանս դըրուած խօսքերով:

Բ. ոչ մի ժամանակ այդ դրկից թերթին հետ միանալու ոչ միտք ունեցած, ոչ ալ որևէ մէկը միջնորդ դրկիւնք:

Ինչքան սնանկացած ըլլալու են ճշմարտութեան, որ անճշտութեանց վրայ ապրելու ճիգը կը գործուի:

Ճշմարտութիւնը ամենու ալ կը բաւէ:

Գ. Պ. Չ.

### ՊԱՏՈՒՈՅ ԱՏԵԱՆԻ ՇՈՒՐՁԸ

Ամերիկայի Հայութիւնը ամէն կողմ հետաքրքրուած է պատուոյ ատենանի մը խնդրով և իրարու ետեւ նոյն նպատակին նուիրուած ընդհանուր ժողովներ սեղի կուռնան:

Պրայթն, Նիւյորկ փորթ: Լօէլ, Լօրէն, Լին, Ուստր ու Փրովիտէնս եւս կուգան աւելնալու նոյնանման ժողովներու երկար ցանկին:

Փրովիտէնի ժողովը մասնաճիւղ ունի զարուստ արժանի է. այդ Հայութեան կեանքով ետուց քաղաքին ոչ կու սակցականները Դրօշակի Հրատարակած յաւելումի առթիւ Պ. Արփիարի համար պատուոյ ատենան մը պահանջելու նախանձանիւրի. երբ տեսան թէ այն նըպատակաւ դուրսարուած առաջին ժողովն իսկապարտեցաւ ու իր նպատակին չը ծառայեց, երկրորդ ժողով մ'ալ կանչեցին ու որպէսզի կրկին իրենց այս ձեռնարկը շահատակներու կանչուընտուքին զուգ չեղիցայ, որոշեցին կուսակցականները իրենց ժողովէն դուրս հանել ըսելով «Այս մեր (ոչ կուսակցականներու)

անդամական ժողովն է. կուսակցականները իրաւունք չպիտի ունենան մեր մէջ կենալու: Ապա տեսնելով որ Դաշնակցականները միշտ կը ջանան այդ ժողովներուն կուսակցական գոյն սալ. կը ջանան ցուցնել թէ իբր պատուոյ ատենան պահանջող քուէներու մէջ չեզոքները սակաւթիւ են, և գործնական կերպով ապացուցանելու թէ այդ ներկայացուցիչները անճիշտ են. ներկայ ոչ կուսակցականներու իւրաքանչիւրին իր տնունը ցանկի մը վրայ ստորագրել կուտան, որոց թիւը կը հասնի 136 ի. այսպիսով գործնական ապահով կուտան պատուոյ ատենանի հակառակորդներուն այն նենգամիտ հրատարակութեանց որով կուզեն ցուցնել թէ սոյն խնդրով հետաքրքրուողներուն թիւը սակաւ է:

### ՉԻՆՎԱՐԺԻՑ ՀԱՆԴԵՍ

Փրովիտէնս ուրիշ Հայաբնակ տեղերու բողոքատմամբ շատ մասերով նախանձելի է:

Մայիս 5 ի երեկոյեան Փրովիտէնսի գինավարժից Արշակունի խումբ օժանդակութեամբ Փրովիտէնսի Հայ նուագաձուլաց խմբին մարզանքի փառաւոր Հանգէս մը տուաւ: Ի միջի այլ ամերիկեան սպաններու ներկայ էր և քաղաքին փոքր գնդապետ իբրեւ քննիչ:

Նա իր բուն նախնի ծափերովը խորին գոհունակութիւն կը յայտնէր մարդու ողներու հիանալի ճշգրտազուգութեան և ճարակութեան մասին:

Գինապետը մեր այս փոքրիկ խումբը իր յանդուրժեմբ քաղաքին ամենաառաջին խումբերուն դասը դասեց:

Ներկայից երեսները ազգային Հայաստութիւնով կը փայլէր. տեսնելով այդ խումբի մը գինուորական մարզանքի զարմանք ազդելու չափ կանոնաւոր ու ճարակի շարժումները:

Յուսանք թէ շատ Հայ երիտասարդներ որ իրենց երակներուն մէջ գինուորական արիւնի տաքութիւնը ունին, պի միանան Արշակունեաց խմբին:

Խումբը յերախտագրութիւն իրենց Ամերիկացի մարզիչ Հարիւրապետին, գեղեցիկ սուր մը նուիրեց որուն վրայ գեղագրութեամբ գործած էր իր անունը Արշակունի գինավարժ խմբին կողմանէ երախտագրութեան յիշատակի խօսքերով:

Յուսանկայ կրակի Մայիս 20 Ս. Փ. Եկեղեցւոյ ժամերգութիւնը կըսկսի ըստ սովորականին ժամը 10 ին. Արթ. Տ. Ղեւնդ Վարդապետ պիտի քարոզէ Նիւթ ունենալով «Եկեցե՛ք արքայութիւնը»:

Յետ եկեղեցւոյ պաշտաման երիտասարտաց Գրիստոնէական Ընկերութեան անդրանիկ ժողովը տեղի կուռնան ժողովարարահին մէջ:

Ի գրիստութիւն բարեպաշտ ժողովըրդեան կը ծանոցանենք:

Հոգաբարձութիւն  
Ս. Փ. Եկեղեցւոյ

### Ա Ձ Գ

Մեր գործակալներէն կը խնդրենք որ մինչեւ 36 թիւ մեզ հետ ունեցած Հաշիւը մին փութով մաքրել:

ՆԱԿԱՎ ՄԻՆԻՍԵՐ

8 Մայիս 1900

Ըստ խնդրանաց տեղւոյս հայ ժողովրդեան անցեալ կիրակի Առաջնորդ Սրբազան Հայրը եկած էր աստ Ս. Պատարագ մատուցանելու և քարոզութեամբ զմեզ մխիթարելու: Տեղւոյս եկակոպտական եկեղեցւոյ երեք Արժ. Տէր Աւիլէմ որ Գրիստոնէական Հիւրասիրութեամբ կանխա խոստացած էր թոյլատրել կատարել մեր պաշտամունքը իրենց սեփական եկեղեցւոյ մէջ տոբրակն Ժամանակէն առաջ աւարտելով իւր առաւօտեան պաշտամունքը հաճեցաւ մեր տրամադրութեան տակ դնել եկեղեցին: Իբրովիտենէն և Ուսարէն հրաւիրուած երաժիշտ Պարոնները զաղութիւն մէջ գտնուած քաղաք հետ երգեցիկ լաւ խումբ մը կազմած էին: Ս. Պատարագ սկսուեց Կէսօրէն կէս Ժամ առաջ և տեւեց մինչեւ Ժամը 2: Ժամասացութիւնը խիստ կոնտնաւոր կոկիկ և յուզեալ էր: Ներկայ էին մինչեւ վերջ տեղւոյս հայերը ամբողջովին, եկեղեցւոյ սեփական ժողովուրդէն շատերն Արժ. երեք և Սընտէ-Յ. Քոբուի աշակերտները խմբովին իրենց ուսուցիչներով: Սրբազան Հայրը քարոզեց Կէս Ժամու չափ Գրիստոսի մեր փրկչին յաղթական յարուսթիւնը, բացատրելով նորագոյն ժողովրդեան իրենց տառապեալ և հայածեալ ազգաց և անհատից վրայ, յորդորեց աշխարհի փորձանքներէն չյաղթահարուելու համար զինուորով մեր փրկչին յաղթական դրօշին ներքեւ և բարի ու առաքինի կեանքով ջանալ յաղթել շարին: Ս. Պատարագի աւարտումէն ետքը նորին Սրբազանութիւնը այցելեց Արժ. երեքին առնել և շնորհակալութիւն յայտնեց իւր և իւր ժողովուրդեան կողմանէ ցոյց տրուած Հիւրասիրութեան համար: Երբեք ան ժամը 7 ին տեղւոյս աղապարի ժողովարարէն մէջ լսարանի ժողովը տեղի ունեցաւ: Պրն. Սարգիս Տէր Սարգիսեան Պարտաճանաչութեան վրայ եռանդուն և իմաստալից ատենախօսութիւն մը քրաւ:

Սրբազան Հայրը խօսեցաւ ազգային բարօրութեան ներքին խնդրանքներէն մի քանին մասնաճիւղ ընելով, և յաւարտի յայտնեց ժողովուրդեան առաջնորդարանի մը գնման ձեռնարկը, ժողովուրդը համակրելով ձեռնարկին § 60 ի գումար մը նուիրեց և Սրբազան Հայրը արտաբերեց օրհնութիւններով փակեց ժողովը:

Ա.Ա.Ա.Բ.Ե.Ա.

ՆԱԿԱՎ ՊԱՐՍՎԱՍՏԱՆԷՆ

Բարանդուղ 1900 Մարտ 18

Մի քանի օրերից ի վեր պայտյաի առիթով Բարանդուղ գաւառում ենք գտնուում, որն երկու ժամու չափ հեռաւորութիւն ունի Ուրմի քաղաքից: այս գաւառական աւելի կարաւային գծի վրայ լինելով և Ուրմի լճի Հարաւային եզերքը ամենահարթ տափարակի վրայ լինելով աւելի տաք է Ուրմից: Հետեւաբար մենք այս տեղում այժմ զգում ենք կատարեալ գարուն:

Այս գաւառում գտնվում է մօտ 200 գիւղեր, որոնցից 14-ը հայաբնակ են: Հայեր խաւառ մտացած Մայրենի լեզուները խօսում են թուրքերէն, և ասորական գիւղերում ասորերէն: Աչքի են ընկնում այս գաւառի թիւմաթար և Բարաուտ գիւղերու երկուսն ուսումնարանները: որոնք կառավարվում են Դամրի թուրք Հայրուհեաց Ընկերութեան ծախքով, կամեցողութեամբ վանցի Աւետիս Քաչանայի Շաղօհանց: Ինչպէս պատմում էին յիշեալ գիւղերի Հայ և Ասորի ազգաբնակիչներ սկզբում խիստ գծուարութիւններին պատահել յիշեալ քահանան մինչեւ յաջողութեամբ երկու գիւղերում ուսումնարաններ բաց անել: Արովհետև զբարաց Օհաննէս Բ. Հանան տարաձայնել է թէ «Ուսուցիչները Բարանդուղում ոտք կոխելով ձեր աղոյ պահ ուսել են ուսուցանում, ուրիշ ոչ ինչ»: Երբուժով հաւատացուցել է մօլո վարդին թէ՛ ինքը փոխանորդ քահանան էլ պահան ուսում է: Արովհետև այս գաւառում պահը լուծելն ամենամեծ մեղքը համարվում է, թիւմաթար գիւղացւոց միայն կարողանում է համարել

զել գիւղատիրոջ սպանալիքների ազգեցութիւնով, թշուառ թիւմաթարցիք այժմ նոր են գզում իրենց սուլը և ճշմարտին էլ խոստովանում են, բայց արդէն անցածն անցել է, ուսումնարանները խիստ պատշաճաւոր կեդրոններում հիմնուել են, այնպէս, որ եթէ կամենան Բարանդուղի 14 հայաբնակ գիւղացիները, կարող են իրենց զուակներն ուղարկել այս ուսումնարաններում ուսանելու:

Բորչիկ և կիսամերկ աշակերտներն ու աշակերտուհիները այցելուներին վրայ մեծ տպաւորութիւն էին թողնում: Ինչպէս նորուս թրքախօսներին, կակաղելով էին արտասանում հայերէն բարբերը, բայց մանկավարժական մարտը արտասանութեամբ: Մնողներն էլ հետեւելով իրենց որդիներուն, սկսել էին թուրքախօսան հայերէն խօսիլ: Այցելուներին չափն ու սահմանն անցնում է. մանաւանդ այն այցելուներին, որոնք յառաջագոյն այցելել են այս գաւառի հայոց: Քաւառակիս 200 գիւղերից 80-ը Արախս-խան Միրիսիանի մէջ: մնացածը հազարաւորներին վրայ բաժանուած:

Արախս-խան Միրիսիանի մի բացառիկ անձնաւորութիւն է կազմում Պարսկատանում, որն որպէս բազմաթիւ գիւղերու տէր, Աւրմիոյ ամենահարուստ համարուած թուրք է, մէկ խօսքով Բարանդուղի տէրն ու թագաւորն է բացարձակ: Բայց պէտք է խոստովանել որ շատ լաւ էլ պահպանում է իւր Ռայեթներին: Փողէ հարկաւոր Ռայեթներն տալիս է Արախս-խան, ցորեն է հարկաւոր դարձեալ տալիս է և առանց տոկոսի համբերում է տարինբով, մինչեւ Ռայեթը իւր կամքով վճարէ: սորա համար էլ մեծ ժողովրդականութիւն և համակրանք է շահել: շատ անգամ ազգանքներին ձրի ցորեն է ցրվում, մասնաւոր անցնելու տարի այս ժամանակները իւր բազմաթիւ ամբարները բացած ցրվում էր: գոնէ այսպէս են պատմում մեզ բուն իսկ Բարանդուղից հայերը, որոնք Արախսի Ռայեթներն են: Պատմում են նոյնպէս գիւղացիք թէ «Եթէ Արախս-խան Միրիսիանի Տէր Շաղօհանցի բարեկամն չլինէր, դժուար թէ կարենար ուսումնարանը բանալ մեզանում»: Վրանք իր այնպիսի մասնութիւններ էին արել, և թէ գիւղացիք հայ էլ լինէր, վարժարանների բացուելուն թշնամի պիտի դառնար մեզ հետ: Այս գաւառի 14 գիւղերի հայ ազգաբնակչաց հովուում է մի Աղբակցի ողորմելի քահանայ: Ամէն գիւղերում պատահելիս՝ նախ քահանայի մասին էին խօսում, որ չունէին: Թիւմաթարցիք գանձաւորում էին Այվատեան Եպիսկոպոսից, որ Շաղօհան գործակալի նշանակած ուսուցչին չէր ձեռնադրած անցեալ տարի, որոց մեռելները թաղում են Ասորի կայաններ, ինչպէս երկխաններն էլ մկրտում են նոյն կայանները: Այս խուսակիւնում ինկած ժողովրդի ձայնն ո՞վ է լսում, որոց մէջ մինչեւ այսօր մուտ գործած չէ ոչ մի գործակալ, բայց պտղները հաւաքող քահանաներից, որոնք փոխանակ ժողովուրդին ուղղութեան բերելու, աւելի մոլորեցուցիչ են, մասնաւոր Մուժամբար գիւղացիք Տէր Մկրտիչը, որն այժմ Ատրապականի առաջ քահանան է և երբեմն թիւմաթարութեան փոխանորդի պաշտօնը վարելու արժանաւորութեան հասել է: Հակառակ իւր բազմակողմանի անարժանութեանց և շնորհիւ զօրեց կոնստանտուպոլիսեանց: Այս քահանային մօտէն ճանաչողները միայն գիտեն թէ կրօնական սեւ հազուադէպ ներքեւ ինչ սեռ և շրջանային հոգի ունի: Թէ ինչ գառնազգեստ գայ է, այսպէս էլ զգում են բոլոր իրեն պատահող լուրը անձնաւորութիւնները: Գէթ այսպէս պատմել են ինձ ամէն ողմիւր մակրէժցիները: Բայց ինչ արած, որ շնորհիւ բազմամեայ նուիրակութեան, պաշտօնին հազարաւոր թիւմաների տէր դարձած, տէր է դարձել և Դամրիժի մի կարգ հաստազուխներին:

(Շարունակելի)

Առ Խմբագրութիւն

Ձայն Հայրենեացի

Ապրիլ 21 ամսաթիւն և 33 թուակիր «Ձայն Հայրենեացի» մէջ ընթերցայ լընաւորն թայմի Ապրիլ 2 թուին քաղաւած մը, որով կը ծանուցանէ թէ՛ Հնչակեան Մասնաճիւղը Արթին փառային և Օրմանեան Պատրիարքին սպանական ազգարարագիր զրկել է, Որպէսզի երկուքն ալ հրաժարին իրենց պաշտօնէն, այսպէս երկուսն ալ մահու պատիժ պիտի ընդունին: Ինչո՞ւ որովհետեւ «Մեր Ազգ. Մասնաճիւղը» թիւնը և մեր եկեղեցական օրէնքները երբէք այսչափ բռնաբարուած չեն, ո՞չ ալ մեր ազգը այնչափ վայրագօրէն հայածուած և ասանջուած, որչափ այս երկու վարչապետներու օրը:

Սյո, ինչո՞ւն ճիշդ և ճիշդ է, բայց ազգին և եկեղեցւոյ տարած տառապանքներն այս երկու վարչապետներու եւ ի մասնաւորի Օրմանեան Պատրիարքին շընորհիւն է, նոքա՞ են պատճառն:

Ուսումնասիրած, սերտած ենք այս պարագաները, և աւ հակառակ էնք իւրաց վիճակը, և այս ամենը ընելէ յետոյ խղճի հանդարտ ու անկողմնակալ համոզմամբ է որ մահ սպանալու չափ ծանր վճիռ կարձակենք:

Իբր բանաւոր արարածներ, խոհական մարդիկ, անցեալէ միշտ օգտուելու պատրաստ, ակնարկ մը թողնով զեռ մօտ անցեալի մը վրայ, գիւրիս պիտի համոզուինք թէ ո՞րքան յստուած գործուած է, և շատեր այսպէս մարդասպաններու և ոճրագործներու դասը շարել տալու առաջնորդած, հայրենասիրական կոյր խանդի մը բուռն ու զգնութիւնէն մղուած:

Ձեր թերթը մասնաւոր Տիրա խմբագիր, լի է սոյնպիսի յստուած և ասանց լուր և մասնաւորութեան արդեանց յիշատակութեամբ:

Եկեղեցաց Գուրգէն ստորագրող ձեր թղթակիցը մեզ ծանօթ իրողութիւններու շարքին կ'աւելցնէ, մթին մէջ գործուած, շատ մը քառասուն արարածները յեղինակներն ՀԻՐԱՍՏ տիտղոսով մկրտելով, ըստ ունան, մեր Ս. Եկեղեցւոյ Սրբոց շարքին մէջ ստուելու տիրուր յաւակնութեան ալ տեղի կը տրուի:

Գարակէօզեանի սպանումը, որ այսօր ուրիշ յեղափոխական մարտին մը ինք իսկ կը դատաւարաւէ, կը պիտարակէ և ոճրագործ կը հռչակէ այդ վատ գործոյն հեղինակն կամ հեղինակներն, մեր ազգին ճակտին վրայ իբր անջինջ դատակնիք պիտի մնայ: Թո՞ղ ինչ որ կուզուի ըսել ըսուի: Հերոսութիւն էր, երբ գործուեցաւ, կոյր խանդի թըս սխալ հաշուոյ մը գնիւթութեան մ'ընդին, իսկ այսօր՝ սթամբուլ, ոճրագործութիւն կ'ունենալի նոյն իսկ այս անպատուաբեր միջոցներու հաւատացող խումբերու կողմանէ:

Արքե՞օք, չենք կարծել թէ, յստուածն է մեր դատողութիւնը, մեր արարքը և մանաւանդ այդ ստակալի վճիռը այսօր ալ:

Օրուան տաք խնդիրներէն մէկն է, այս պարագային մէջ բարեբախտաբար, Ամերիկայի և Թուրքիոյ մէջ ծագած անհամաձայնութիւնը:

Կուզենք ուսումնասիրել զայս և օգտուել այդ խնդրոյն բարոյական հետեւութեանէն:

Մեր պարագաներուն ծանօթ են թէ Միացեալ Նահանգաց կառավարութիւնը, հարիւր հազար սուլար կը պահանջէ Օսմանեան կառավարութիւնէն, իբր հատուցում, միտնարաց կրած վնասուց վերջին Հայկական ջարդերու առթիւ:

Ամերիկայ այս խնդիրը կարգադրելու համար, երեք դեռուստ փոխից. Թըրքը, Անճէյ և Միջրատս: Ասոնց ամէնքն ալ իրենց կարողութիւնն և քաղաքագիտական հանձարն ի գործ դրին, այդ գուտարը գտնուելու միջոց, օրինաւոր, ինձ պարեալ պաշտօնակալ պատասխանն առին: Ասանց հնչուեց ձայն մը կանանչուեց հասնելու: Եղան ասոնցմէ՞ ունեք որ թուրք կառավարութեան հաճելի երեւնալու համար այժմ թըբաց ատելի նըկատուած հայ ազգին շահուն իսկ հակառակ գտնուեցան: Թուրքը օգտուեցաւ զոցա այդ տրամադրութիւններէն, բայց իր որոշումէն մագի չափ չընդեցաւ:

Այժմ՝ որ նաւ Եորքի մէջ Եկեղեցական Համագումար ժողով մը տեղի կուտանայ և նախագահական ընտրութեանց օրերը կը մօտենան, Ամերիկայի ներկայ կառավարութիւնը, Համագումարի սիրտը և ընտրութեանց օրը անոնց քուէն շահուելու նպատակաւ և իր ալ Պոլսոյ ներկայացուցչին, Պ. Միջրատսի հոս ներկայութիւնէն օգտուելու դիտմամբ, այդ պահան դարձան մը խորհեցաւ, Սուլթանին ըսաւ, կամ մեր այս պահանջը կը հատուցանէք և կամ մենք կը զրկենք մեր զբաղանքները և Չմիւսիսի նաւահանգիստը գրաւելով մաքսային հասոյթներէն կը գանձենք զայդ:

Թուրքիոյ քաղաքագէտները որք մէկ խօզ ով թուղթ խաղալու սովորութիւնը չունին, խնդիրը հարթելու երեւոյթով, Խարբերիլի վնասուած միտնարական գարոցին վերաջինտութեան հրամանը ինչպէս և Պոլսոյ Ռոպէրթ Գոլէճի յաւելումը շէնքի մը արտօնութիւնն տուին, բան մը որ զլացած էին նոյնպէս սիրաւից գէպէն ի վեր: Բայց զրամի մասին օրինաւոր կ'սխեցին:

Մեր Եւրոպական Լըրճուկ և մուրաց կառավարութիւնները, Թուրքին հաճելի երեւնալու սարկութիւններն քարոզեալ չը զլացան և սկսան Ամերիկայի պահանջից կարգադրման արգելք յարուցանելու սովորած միջոցներն ի մէջ բերել:

Միացեալ Նահանգաց կառավարութիւնը որ Սպանիոյ Ըրն Երեսերը կործանած ըլլալու փառքը տարի է մի վեր կը վայելէ և Ֆիլիպին կղզեաց ժողովրդեան ազատութեան արդար ձգտումներն զինու զօրութեամբ խեղդելու հերոսութեան դարինն շահել կը նկատի, տեսնելով թէ ըրած պլըքը թուրքերը չեն կըլըր և յստուած ձեռնարկ մը ընելով Եւրոպական միջամտութիւնը զինքը պիտի կաշկանդէ, գոհացուցիչ համարեց Սուլթանի տուած արտօնութիւնները, ի մասին միտնարական այդ երկու կրթական շէնքերու շինութեան, և այսօր ալ կը յայտարարէ թէ՛ կառավարութիւնը չը մտադրէր նաւային ցոյց մը ընել Օսմանեան ջուրերու մէջ: Եթէ Սուլթանը չը կարգադրէ խնդիրը, Ամերիկան կառավարութիւնը ատանց վճարական միջոցներու զիմբու, Լոկ պիտի գահան: Իր դեռուստը հոս պահել և միայն փոխանորդի մը ի Պոլսու, ներկայութեամբ ըրաւ իսկ այս անպատուաբեր միջոցներու հաւատացող խումբերու կողմանէ:

Անորադաւանով մեր հարգին գիտեմ թէ ոչ գր կարողէ ժխտել հայ ազգին և եկեղեցւոյ մասնաւոր ի թուրքիա կրած տառապանքներն, բայց կը հարցնեմ մեր բարեկամաց թէ այդ շարժարանները արդիւրեւ, բառնալու ինչ ոյժ և միջոց ունինք ազգովին, և մեր պատասխանած Պատրիարքներն ու վարչապետներն անհատարար կամ հաւաքաբար:

Շատ և շատ արարաւ պահանջներ ունինք, այո՛, բայց այդ պահանջից իրականացումը ազգի պիտու ո՞չ բանակ ունինք ոչ նաւատորմիլ և ոչ ալ մեր վրայ զըթացող զօրաւոր զբացի և հեռուոր օտար ազգ մը:

Պատրիարքները իրենց վնդարի սուր ծայրէն գատ սուր բան մը չունին, բայց միայն հրաժարական մը, որ բան մը չ'արտադրելու երբ խնդիրը թուրք կառավարութեան և հայ ազգին մէջ կեդրոնաւայ և այդ հրաժարականը պատրուակ համարուելով, իսկպէս շահակցող օտար կառավարութիւն մը կամ կառավարութիւններ կը միջամտեն. բան մը որ աստանք թէ անօգուտ է երբ հազարաւոր անմեղ հայ մարդոց արեւը կը հոսեր թուրքիոյ հողերուն վրայ, Պիտատոսի նման, ձեռքերին լուսոցին և ձրի սկանատեսները եղան:

Այդ վճիռը արձակողները ո՞ր եկեղեցականին ո՞ր եպիսկոպոսին կամ ո՞ր մարդուն կարողութեանը վրայ յոյս դնելով ներկայ Պատրիարքը հրամարիլ կը հրաւիրեն: Նմա յարմարողը աւելի արգիւնաւոր պիտի կրնայ ընել զիւր գործունէութիւն և աւելի կարող մէկը պիտի լինի: ո՞վ ունինք, մեր ամենամեծ Խըրմեանն իսկ, իր օրով իր սիրած ազգին



ասան է. կղզիին մեծ մասին մէջ անիշ-  
խանութիւն կը տրբէ. վաճառականու-  
թիւնը և երկրագործութիւնը ջնջման վի-  
ճակին հասած են. նոյն իսկ Մանիլայի մէջ  
ուստոսող այժմ շատ աւելի սուղ է քան  
որ եղած է անոր պաշարման օրերը:

Ակունայտի կրկին սպաննուած ըլ-  
լալու լուրը չհաստատուեցաւ: Անոր Բ. ք  
Չօր. Փանթիլան կարծիք ձերբակալուած  
է:

Վերստին յոյսեր կը տածուին թէ  
ապստամբները համաձայնելով անձնա-  
տուր ըլլալու վրայ են. թէ և ատոր հա-  
ւատարմութիւնը բաւական զօրաւոր հա-  
ւատք պէտք է ունենայ մէկը:

**ՊՍՏԵՐԱԶՄ**

Հօրտ Բօպրթ աշխարհի բազմա-  
գէտները հիացունելու աստիճան բազ-  
մագիտութեամբ սկսած է յաղթանակէ  
յաղթանակ ընթացել:

Օրէնքի երկրորդ մայրաքաղաքն ուր  
Պօլստիսը ամրացած էին, և կը խորհու-  
նէր թէ մեծ ընդդիմութիւն պիտի ընեն.  
Հօրտ Բօպրթս գրաւեց առանց որևէ ընդ-  
դիմութեան: Հոն պօսէր բանակին կը  
հրամայէր նախ. Ըսթէյն, սրբ շատ պա-  
շտադարձ թախանձած է իւր զօրաց օր  
ձեռքաւ տան և պատերազմին Անդրիա-  
կան զօրաց հետ իսկ նոքա մերժեր ու  
իփախուսա դարձեր են:

**ԸՆԲՈՒՄ ԵՒ ՍՈՒԼԹԱՆ**

Վերջին հեռագրի մը նայելով Ռու-  
սական թիւրքեր այն միտքը կը յայտնեն  
թէ Ռուսիա որոշած է Մ. Նահանգաց  
արդիւնքի որ թուրքերի ջուրերը նախ խը-  
կեն. ու երբ զրկուին ինքը պիտի առաջ-  
նորդէ Եւրոպական պետութիւններուն  
որ Ամերիկեան նաւերուն դէմ ելլեն:

**ՇԱԽԻՂ ԿԻՍԱՄԵԱՑ ԶԱՆԴԵՍՐ**

Ստացած ենք վարնայ նոր հրատա-  
րակուի սկսող Շախիղ կիսամետայ հան-  
դիսին առաջին ու երկրորդ թիւերը: Եր-  
կուքին այ պարունակութիւնը գեղեցիկ  
էր: Գովելի է ծրագիրը — Հայոց մէջ հա-  
մերաշխութեան ու փոխադարձ յարգան-  
քի ոգի մշակելու: Շատ շնորհաւորելի է  
այդ նպատակը, Հայութիւնը ամէն բա-  
նէն աւելի այդպիսի մշակութեանց կա-  
րօտ է: Սրտագին յաղորդութիւն կը մաղ-  
թենք մեր պաշտօնակիցներուն:

Սրտագին կատողութեան արժանի է  
Շախիղին բացասական դիրքին յայտարար-  
ութիւնը: Գերբէք չպիտի յարձակինք  
որևէ մարմին, կամ որևէ հաստատու-  
թեան մը դէմ...: Որքան զղուած ըլ-  
լալու են իրենց զբացի փողոցային հայ-  
հայանքներով լի և պաշտօնապէս զրպար-  
տիչ թիւրքերն որ հակադեմոկրատիան այդ  
անազնի թափը կառնեն և կերթան բա-  
ցասական ծայրը:

Ինչու ամէն ազատութեան և յառաջ  
գիտութեան կարապետը եղող սուրբ կը-  
ռիւր այդպէս սրբապաշտուեցաւ և խորհե-  
լի դարձաւ...: Լուեք հայհոյելէն հա-  
զար անգամ աւելի լաւ է. բայց որքան  
լաւ է ողբամիտ և ազնիւ քննադատու-  
թիւնը:

Շախիղ լոյս կը տեսնէ Տօք. Յ. Ս.  
Փափագեանի տնօրինութեամբ վառնա-  
յի մէջ (Պուլկարիա):

**ՄԵՆ ՎԱՃԱՌԱՆՈՑ ԶԵՆՈՒԹԻ ԾԱԽԵԼՈՒ**

ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԵՒ ՍՐԱՊԵԱՆ

151 Մէյն Ըսթրիթ Ուստր Մէյն

Մենք կը գնենք և կը ծախենք տնա-  
կան ամէն կարգի կահք և գոյք (Փրնի-  
չուր) նոր կամ հին:

Մենք ամէն միջոց ունինք մեր մա-  
նուանդ մեր հայ յաճախորդները գոհա-  
ցունելու թէ ապրանքին լաւութիւնով  
և թէ գնոյն արժանութիւնով:

Դիւրութեան համար ապագիտի դիւ-  
րութիւն ալ հաստատեր ենք. մէկ շոր-  
րորդը կանխիկ մնացելով ամսավճարով:  
Ամէն երկու շաբթի առատօտ ժամը  
10½ է և շաբթի կէս օրին ժամը 2 էն  
և քաղաքի (օքսըն) ունինք:

Դրան քաղաքներու ապարանքները  
չուսով ու ճշտութեամբ կը կատարենք:

**ԱՉԴ**

Կը ծանուցանենք Հայ Հասարակու-  
թեան թէ՛ Պատիճի Թայլըր փողոցին մէջ  
նոր խանութ մը բացած ենք, ուր կը վա-  
ճառուին ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԸՆՏԻՐ ՆՊԱՐԵ-  
ՂԷՆՆԵՐ ՉԱՓԱՌՈՐ ԳՆՆԵՐՈՎ:

Յանձնարարութիւնք կը կատարուին  
փութով և խնամով:

ՅՈՂՉԱՆՆԵՍ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ  
ԱՐՍՄ ԱՍՔԱՆՉ

Մեր Հասցէն է  
Tyler Grocery Co.  
113 Tyler St. Boston Mass.

**ՀՅՑ ԿՐԱՎԱՃԱՌԱԿԱՆ**

Պոլսոյ, Վենետիկի, Մ. Մամուրեանի  
և Տիկին Բաֆֆիի հետ մասնաւոր կարգա-  
դրութիւն ըրած՝ նաև ուրիշ զբաղումներէ  
ալ զբոսեր բերել տալու միջոցները ձեռք  
բերած ըլլալով կուգամ գրասէր Հայրե-  
նակիցներու ծանուցանել թէ իրենց փա-  
փաքած գրքերը սովորական գնով կարճ  
ժամանակի մը մէջ՝ բերել տալու պատ-  
րաստ եմ. քիչ ժամանակ վերջը մեր  
քով արդէն պահեստի պիտի ունենանք  
ամէն ժողովրդական գրեանց շարք մը:

Փափաքողաց գրացուցակ կը շարկենք:  
Մեծ քանակութեամբ գրեանքներու՝  
մասնաւոր գեղջ կընենք:

Դիմել և ՊԵՏԻՇԵԱՆ  
390 P O Box  
LOWELL MASS

**ԿԱՐԱՊԵՏ Ե. ՓՈՓԱՉԵԱՆ**

NEW YORK  
LIFE INSURANCE CO.,  
ՆԻՒՆՅՈՐԲ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԶԵՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ ԸՆ-  
տանձնած է, և անձամբ կամ նամակաւ  
իրեն դիմողները կապահովագրէ ճիշդ  
և ուղիղ պայմաններով:

Նիւ Եօքս կենաց ապահովագրական  
Ընկերութիւնը աշխարհի ամենէն մեծ  
միջազգային ապահովագրական ընկերու-  
թիւնն է, 82 կառավարութեան ճանչցու-  
ած և անոնց Օրէնքներով վաւերացուած:

Այս նիւթին վրայ պատրաստած եմ  
համառօտ տետրակ մը գրք կը լրկեմ  
ամեն անոնց, որոնք կը շահագրգռուին  
այս խնդրով և կը փափաքեն որոշ տեղի  
կութիւններ ստանալ:

G. H. Papazian,  
15 Temple Place,  
Boston, Mass.

**ԱՌ ԶԵՆՈՒ ԲԱՌԱՐԱՆ**

ԱՆԳՆԻՐԵՆԷ ԶՅՅԵՐԷՆ

Գործը նոր կենք կը բերէ բնա-  
պէտ, Ս. Չատուրի նոր կենք կը բերէ  
բարոյապէս: Սոյն Բառարանն ալ նոր լի-  
զու մը կը բերէ ձեր տունն իրապէս: Գի-  
նէն է \$ 2,50:

Չատուրի առթիւ պիտի զրկենք ար-  
տաքոյ կարգի գեղընով մը, այն \$ 1,75 ի  
առթիւն օգտուի ուղղուր թող հաճի  
դիմել առ Պ. Ռ. Թորոսեան

564 Clinton Avenue,  
West Hoboken, N. J.

Գործի Լաւ Պատեհութիւն, Ը  
Կուգամ յայտարարել յարգոյ հայրե-  
նակցաց թէ Փրովիտէն 304 Տիւ Ըսթր.  
Սափրիչի խանութ կուգամ ծախել ո՛ր  
միջակա ուրիշ խանութ մը բացած եմ  
եւ չեմ կրնար երկու խանութ բանե ու-  
նել: Այս խանութը 12 տարիներէ ի վեր  
Սափրիչի խանութ եղած է եւ կը վստա-  
հացնեմ սր գործը գիացող սափրիչ մը  
կրնայ շարժական 12 Տօքսը շահել.  
Ծախել ոգիպաւած ըլլալով գինը շատ ար-  
ժան պիտի ընեմ: Մանրամասնութեանց  
համար դիմեցէք առ՝

Պետրոս Պրչագեան  
724 Վէսթ-Միլիոնթր Փրովիտէն

ԿԱՐՈՒՈՐ ԱՉԴ  
Ճաշակի յարմար պատուական ապուրտ  
(Պայտէրի Պատրոնայ) կը պատրաստ  
տեմ. գինն է՝ փառնուր 35 սէնթ. վա-  
ճառման կեդրոնանդին՝

S. ՍԷՄԷՐՃԵԱՆ  
113 TYLER ST BOSTON MASS

**ՐԱՅՅԻՒ**

«ԴԱԻԻԹ-ԲԷԿ» Ա. Բ. Կ Հատոր վեր-  
ջաբանով և «ԿՅՑՅԵՐ» Բ. Հատոր լի-  
կատար:

Իւրաքանչիւրի բաժանորդագիրն է  
5 Շիլին:

Լոյս կ'տեսնեն ներկայ 1900 թիւ ըն-  
թացքում և անմիջապէս կուղարկուին  
բաժանորդներին որպէս «ՍԱՄՈՒԷԼԸ»  
եղաւ:

Բաֆֆիի միւս երկերը ունենալ ցան-  
կացողները պիտի ուղարկի դիմեն մեզ:  
Մեզինց կարելի է ստանալ նաև Որիմ  
եան Հայրիկի, Մերենցի, Պետրոս Դուր-  
եանի և ուրիշ նշանաւոր գրուածքներ:  
Հասցէ.

MME. RAFFI,  
47 Uxbridge Road,  
London, W., England.

**ԿՈՒՉԷՔ ԴՐԱՄ ՓՈՈՒՄԻՐԵԼ**

Դիմեցէ՛ք Առ՝

Սարգիս Գ. Սարաֆեան  
1060 Փ. Օ. Պօսթ, Ուստր, Մասն.

Դրամ կը փոխադրենք Թիւրքիոյ բո-  
ււր քաղաքները: Կեդրոնանդին է Սար-  
գիւր, Տեար Յովհաննէս Սարգիսեան,  
որ երկար տարիներու գործունէութեամբ  
և վարիով հանրածանօթ է և Կ. Պօլսոյ Տ.  
Գէորգ Սարգիսեան: Մեր Գործակալ  
ներն են. Մալաթիա Սարգիս Պօնտիս Գ.  
Լեան. Չմշկածակ՝ Մէյրիկի Ինճէյ-  
եան. Բալու՝ Գարեգին Բիրճեան.  
Չնքուչ՝ Յակոբ Տաղաթիլեան: Թիւրքի-  
ոյ ուրիշ բոլոր քաղաքներն ալ գրամ կը  
փոխադրենք Սարգիւրի միջոցաւ:

Մարտի 10 թէ հեռագրով եւ թէ նա-  
մակով կրամ կը փոխադրենք և նաև  
յին ստամբուլի կուտանք:

Ուստր մէջ կը վաճառենք պամեա  
սիկարի թուղթ և ուրիշ շատ տեսակ  
Տաճկական ապրանքներ:

Սանտիսի Հասցէն է՝ 14½ Արշ Սթ.  
Ուստր, Մասն.

ՈՒՇԱՒՐՈՒԹԻՒՆ. — Մեզ զրամ զըր-  
կու է Մընի Օրտրով, կամ Պանքայի  
չէքով:

**ԴՐԱՄ ԿԸ ՓՈՈՒՄԻՐԵՆԻ**

Ամերիկեան հայ գաղթականութե-  
ան կուգամ յայտարարել զը հայրենիք  
դրամ փոխադրելու դիւրութիւն ընձա-  
յիլու համար. փոխադրի նոր գործով  
սկսած եմ ի Պօլսոյ շատ մը բարեկանե-  
րու ու ծանօթ հայրենակիցներու թա-  
խանձանաց զոյացում տալու. աւելորդ է  
ոչինչ գովեստներ ընել Սարգիւրի ինչ-  
ոս նաև Տիւրքիական երազաց տան վարկին  
ու վստայութեան նկատմամբ. ինչ որ  
արդէն երկար տարիներէ ի վեր կը վախ-  
են, պէտք եղած վստահութիւնն ու վար-  
կը գործի հրապարակի վրայ: Գործը  
պիտի հաստատէ ու վըլայէ գոյ, և  
այս համարձակութեամբ կերպը խառնով  
ամէն անոնց, որք կուգին Փ. գրի գործ  
ինձ հետ: Օտմ. Լ. \$ 4,50 էն կուտանք:

Մասնաւոր գործակատարներ ունինք Սար-  
գիւր, Մալաթիա, Տիւրքիական, Սեբաստի-  
ա, Հայպ, Կ. Պօլսոյ և Մարտիլիա ինչ  
պէս ուրիշ այլ և այլ քաղաքներ: Մար-  
տիլիայէն եկողներու գրամի և այլ պէտ-  
քերու մասին խնամք և դիւրութեան  
միջոցներ կընձեռենք: Հայաշատ քաղաք-  
ներու դիւրութիւն ընձայելու համար  
երկու գործակատարներ կը նշանակեմ որոնց  
կրնան դիմել. — Ուստր. Պ. Գրիգոր Մար-  
գարեան. 157 Սըմըր Սթ. Նիւ Եօքսի և  
Նիւ Չըքիի Պ. Մարտիրոս Թաշճեան  
251 Ուիլմ Սթ. Նիւ Եօքս

Ինձ նամակ և գրամ դիւրողներ պէտք  
է հետեւեալ հասցէով թղթակցելն՝  
P. O. Box 2652. Իսկ զիս անձամբ  
տեսնել ուղղուներ կրնան դիմել՝

344 Cambridge St.,  
Boston, Mass.  
ՅՈՂՉ. Մ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

**Յայտարարութիւն**

Ամերիկայի Հայաստակ բոլոր հայրե-  
նակիցներ կը հրաւիրուին ժողովի, մեզի  
նպատակաւ քանի մը նիւթերու վրայ  
խոսելու, յառաջիկայ ուրբաթի իրիկուն.  
Մայիս 18 ին:  
476 Մէյն փողոց

**Ա. Ն Ա. Հ Ի Տ**

Հանգէս Աղգային, Գրական և Գե-  
ղարուեստական. բացուած է Բրդ. տար-  
ուայ Բաժանորդագրութիւնը:

Հասցէ  
ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԱՆ  
6 Բլէս Տը Լ'Օտէօն Բարիզ



**Ն. Պ. Ա. Վ. Ա. Չ. Ա. Ռ.**

ՄԵՏԱՔԱՆԱԿ ԵՒ ՓՈՒՔՐԱՐԱՆԱԿ  
Ս. ՏԱՄՊՈՒՐՈՒՆԵԱՆ  
Նիւ-Եօքս 509 2 րդ. Ալիօ

Տեղական և Արեւելեան բազմասե-  
սակ նպարեղները, լուսագոյն տեսակ  
ընդեղները, եղանակին համեմատ բան-  
ջարեղները և առօրեայ թարմ միս: Հայ  
կական պանիրաւուներ 13 սէնթ մեծա-  
քանակ գնողաց 11 սէնթ. Ուստրի պա-  
տուական Պըլուր և Մեծած փառնուր 3  
սէնթ մեծաքանակ գնողաց համար 2,  
2 թիւապուղ (գէլթոն) փառնուր 10 ս.  
մեծաքանակ գնողաց մասնաւոր գեղջ  
կընեմ, 5 փառնուր քէն սոյոց համար 25  
սէնթ մեծաքանակ գնողաց 20 սէնթ հա-  
տը: Մեր քով միշտ պատրաստ կայ  
Հայկական ամեն տեսակ ապրանքներ, ա՛-  
ղք դրուած եսփրաղ, ընտիր կորկոտ,  
ղեթիւ պահած հալածի, կանտին գէլթոն.  
Չէյթոն եաղի (ընտիր տեսակէն) մա՛-  
քառանի լօքում տեսակներով, սպաղ-  
ցուած կամ շաղցուած, սու՛մախ, սիսեռ  
Պօլսոյ խաշար պանիր, լէպլէպի շաքա՛-  
րի տեսակներով, քիմիոն, անասն պատ՛  
տուական խունկ. աղոր ալիւրէ հաց  
2 հատը 6 սէնթ, և այլն...: Նամակով ե՛-  
ղած յանձնարարութիւնք փութով և քիչ  
վարձով կը կատարենք մեր յատուկ  
կառքով: վճարու մեքը կանխիկ են և ոչ  
ապառիկ:

**ԱՉԴ**

Ուստրի մէջ երկար տարիներէ ի վեր  
հաստատուած ենք մեր յատուկ պուլուրի  
գործարանը: Սոյն գործին մէջ մեծ փոր-  
ձառութիւն ունենալով, ամենալաւ ցո-  
րնէն կը պատրաստենք ընտիր սոյլ յոյս,  
որ իր մաքրութեամբ և ուրիշ լաւ յատ-  
կութիւններով՝ ստանիկիներու և ճա-  
շարանակներու գնահատութեան ար-  
ժանացած է: Կը պատրաստենք նաև նոյն-  
պէս ընտիր մեծած և կրկուտ:

Ուստր ամեն ով որ կուգէ ընտիր և  
սխորժահամ կերակուր լինելու պուլուր  
և մեծած ունենալ, թող դիմէ ուղղակի  
մեզ: Ապագրանքներ փութով կը կա-  
տարուին. մանրամասն տեղեկութեանց  
համար պէտք է դիմել Հետեալ հասցէին:

Ուստր, Պուլուրի Միացեալ Ընդ.  
151 Ի. Նիւ Եօքս, Ուստր Մասն.  
Տաճկական տեսակ տեսակ ապրանք  
ներ ալ կը ծախենք:

**ԳՐՈՒՄ ԳԱՏԵՂՈՒԹԻՒՆ**

Ամերիկեան կրօնքի և Պրչագեանի  
խանութն կը ծախեմ, ուրիշ երկրք մեկ  
լեւու պատճառաւ, որպէսզի գնել ուղղ-  
ուր գործին վրայ ճիշդ և ճիշդ գաղափար  
կազմէ, շարաթ մը իրեն պատահութիւն  
կը տրուի խանութին մէջ կենանալու եւ  
ամէն բանը հասկնալու որ տանն ան-  
ձամբ պիտի իմանայ գործին ինչ շահա-  
ւոր ըլլալը:

194 Պընթիլ ըսթրիտ  
Չարլըսթաուն  
Օհան Ալպազեան